Գլենդելի հանրային հրաման թիվ 2020-15

Գլենդել քաղաքի Արտակարգ
Իրավիճակների լիազորության ներքո

Հրապարակման ամսաթիվը՝ 31 հուլիսի, 2020 թ.

Դիմումի վճարներից ազատում և զբաղեցման ժամանակավոր վկայականների տրամադրման թույլտվություն՝ մարզասրահների բացօթյա գործունեությունների համար՝ Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության կարգադրություններին համապատասխան

Հաշվի առնելով, որ 2020 թ. մարտի 16-ին Գլենդել քաղաքի քաղաքային խորհուրդը, համաձայն Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի, հայտարարեց տեղական արտակարգ դրություն: Դրա անհրաժեշտությունն առաջացել էր Կորոնավիրուս 2019 (COVID-19) հիվանդության նկատմամբ աճող մտահոգությունից՝ նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված ծանր սուր շնչառական հիվանդության պատճառով: Վիրուսի ախտանիշների թվում են՝ ջերմությունը, հազը և դժվար շնչառությունը, իսկ վարակված անձանց շրջանում տարբեր արդյունքներ են գրանցվել՝ թեթև հիվանդությունից մինչև ծանր հիվանդություն և մահ: Հաստատված դեպքերի քանակը կարճ ժամանակահատվածում շարունակել է կտրուկ աճել: Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնը (CDC) տեղեկացնում է, որ COVID-19-ը հեշտությամբ տարածվում է մարդուց մարդ, և մշակել է ուղեցույցներ՝ առաջարկելով, որ հասարակությունն ընդունի այնպիսի քաղաքականություն և սահմանված կարգեր, որ հնարավոր լինի պահպանել սոցիալական հեռավորություն: Բացի այդ, 2020 թ. մարտի 16-ին քաղաքային խորհուրդը կարգադրեց նաև փակել և մուտքի սահմանափակումներ կիրառել որոշ հասարակական հաստատությունների վրա;

Հաշվի առնելով, որ Գլենդելի քաղաքապետարանը վերստին կրկնապատկել է իր ջանքերը՝ ձեռքերի հիգիենայի, շնչառական կանոնների և սոցիալական հեռավորության պահպանման ուղղությամբ: Չափազանց կարևոր է, որ մենք՝ որպես քաղաք, անենք հնարավոր ամեն ինչ՝ դանդաղեցնելու հիվանդության տարածման տեմպերը համայնքներում և խուսափելու մեր բժշկական համակարգի անհարկի ծանրաբեռնվածությունից: Մեր ջանքերին նպաստելու նպատակով՝ արտակարգ դրության պայմաններում Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի լիազորության ներքո, Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 2.84 գլխի համաձայն, այդպիսի արտակարգ իրավիճակների հետևանքով կյանքի և սեփականության պաշտպանության հետ կապված հարցերի շուրջ կանոնակարգեր և կարգադրություններ կազմելու և արձակելու նպատակով կարգադրվում է մի շարք ժամանակավոր սահմանափակումներ կիրառել Գլենդել քաղաքի որոշ հաստատությունների վրա, որտեղ սովորաբար մեծ թվով մարդիկ են հավաքվում և միմյանց հետ սերտ հարևանությամբ են գտնվում;

Հաշվի առնելով, որ 2020թ. մարտի 4-ին Լոս Անջելեսի վարչաշրջանի վերակացուների խորհուրդը և Հանրային առողջության վարչությունը հայտարարեցին տեղական և հանրային առողջության արտակարգ իրավիճակ՝ ի պատասխան երկրում կորոնավիրուսի տարածման աճին; և Գլենդելի քաղաքային խորհուրդը ընդունեց թիվ 20-29 Որոշումը, որը համապատասխանում է Լոս

Անջելեսի վարչաշրջանի «Տանն ավելի ապահով է» հրամաններին («Վարչաշրջանի հրաման»), որը փակեց որոշակի բիզնեսներ, ներառյալ՝ մանրածախ հաստատություններ, մարզասրահներ, անհատական խնամքի հաստատություններ՝ ի թիվս այլ ոչ էական նշանակության ծառայությունների;

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մայիսի 15-ին Գլենդելի թիվ 20-29 Որոշման գործողության ժամկետը սպառվեց, և նշված բիզնեսները և գործունեության տեսակները շարունակվեցին կարգավորվել Վարչաշրջանի հրամանով;

Հաշվի առնելով, որ 2020 թ. մայիսի 26-ին կամ մոտ այդ օրերին Լոս Անջելեսի վարչաշրջանի Հանրային առողջության պետը վերանայեց Վարչաշրջանի հրամանը՝ ապահովելու որոշակի բիզնեսների մասնակի վերաբացումը՝ այդ թվում՝ ռեստորանների ներսում ճաշելու ծառայությունների, մանրածախ խանութների ներսում գնումներ կատարելու և անձնական խնամքի այլ հաստատություններ համար՝ պայմանով, որ դրանք վերաբացման համար բավարարեն վարչաշրջանի որոշ արարողակարգեր;

Հաշվի առնելով, որ 2020 թվականի մայիսի 29-ին, Լոս Անջելեսի վարչաշրջանի «Տանն ավելի անվտանգ է» հրամանի փոփոխություններին համապատասխան, Գլենդելի թիվ 20-29 Որոշման գործողության ժամկետը սպառվեց, և Գլենդելի որոշ բիզնեսներ սկսեցին վերաբացվել և վերադառնալ աշխատանքի՝ պայմանով, որ բավարարեն վարչաշրջանի որոշ արարողակարգեր;

Հաշվի առնելով, որ 2020 թվականի հուլիսի 1-ին Կալիֆորնիայի նահանգապետ Գեվին Նյուսոմը կարգադրեց երկրորդ անգամ փակել ռեստորանները և փակ տարածքում գործող բիզնեսները՝ ավելի քան 19 վարչաշրջաններում՝ այդ թվում Լոս Անջելեսի վարչաշրջանում, որտեղ վերջին ժամանակներս նկատվել էին կորոնավիրուսով վարակման դեպքերի աճ, և Լոս Անջելեսի վարչաշրջանի առողջապահության պետը կարգադրեց նույնը;

Հաշվի առնելով, որ 2020 թվականի հուլիսի 14-ին կամ մոտ այդ օրերս, Վարչաշրջանի հրամանը փոփոխվեց՝ թույլ տալով բացօթյա որոշ գործունեությունների տեսակներ՝ ներառյալ մարզասրահների, տղամարդկանց և կանանց վարսահարդարման սրահների և անձնական խնամքի ծառայությունների համար:

Հաշվի առնելով, որ կա վիրուսի՝ համայնքային տարածման դեպքերի էական և աճող քանակի մեծ հավանականություն, երբ այն անհատները, ովքեր կրում են COVID-19 առաջացնող վիրուսը, սակայն չունեն որևէ ախտանշան կամ ունեն միայն մեղմ ախտանշաններ, և այսպիսով տեղյակ չեն, որ վիրուսակիր են և այն փոխանցում են ուրիշներին, և այս պատճառներից ելնելով՝ Լոս Անջելեսի վարչաշրջանի առողջապահության գործակալը շարունակում է արգելել վարչաշրջանում սոցիալական հավաքույթները;

Հաշվի առնելով, որ հանրային առողջապահության հրամանները խոչընդոտել են որոշակի տնտեսական գործունեություններ, և Գլենդելի քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում տեղական տնտեսությանն ուղղակի օժանդակություն առաջարկելու համար՝ ի պատասխան COVID-19-ի ներկայացրած տնտեսական ազդեցությունների, և դիտարկում է այն ուղիները, որոնց միջոցով Քաղաքապետարանը կարող է աջակցել տեղական բիզնեսներին, այդ թվում՝ որոշակի բիզնեսների համար բացօթյա գործելու առաջարկությունը՝ միևնույն ժամանակ պահպանելով և հետևելով առողջության և անվտանգության համար պահանջված չափանիշները, որոնք մանրամասն ներկայացված են Լոս Անջելեսի վարչաշրջանի՝ «Աշխատանքի վերադառնալու» մասին արձանագրությունների մեջ;

Հաշվի առնելով, որ որոշ ձեռնարկությունների՝ բացօթյա գործելու հնարավորությունը կնպաստի տնտեսական վերականգնման նպատակներին՝ միաժամանակ պահպանելով հանրային

առողջության կարգադրությունները և արձանագրությունները; և

Հաշվի առնելով, որ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը գտնում է, որ այն հանուն հանրային շահի է, և հանրային առողջության և անվտանգության շահերից է բխում՝ հրաժարվել դիմումի թույլտվության վճարներից և ընդլայնել վաճառքի և շահագործման վայրը՝ ներառելու բացօթյա տարածքը՝ բոլոր կիրառելի հանրային առողջության հրամաններին և արձանագրություններին համապատասխան:

Հետևաբար՝ այժմ Գլենդելի քաղաքային օրենսգրքի 2.84-րդ գլխի համաձայն տրված լիազորության հիման վրա՝ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենը հրապարակում է հետևյալ հրամանը, որն անմիջապես ուժի մեջ է մտնում և գործում է մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը կամ՝ բացառությամբ մինչև այն ժամանակ, երբ Վարչաշրջանի հրամանը փոփոխվում է, որպեսզի թույլ տրվի գործել փակ տարածքում.

Բաժին 1. Մարզասրահներ և առողջ ապրելակերպի ակումբներ: Մարզասրահների և առողջ ապրելակերպի ակումբների համար, (ինչպես սահմանված է Գլենդելի քաղաքային օրենսգրքի 30.70.30G բաժնում), որոնք փոփոխում են բիզնեսի գործունեությունները՝ ի պատասխան COVID-19-ի, և այդ փոփոխությունները կատարելու համար հարկավոր է զբաղեցման ժամանակավոր վկայականի թույլտվություն՝ որպես բացօթյա ծառայություն գործելու համար, ինչպես նշված է Վարչաշրջանի հրամանի և վերաբացման արձանագրությունների մեջ.

- Թույլտվության հայտի վճարը չեղարկվում է ժամանակավոր օգտագործման համար, որն իրականացվում է զբաղեցման ժամանակավոր վկայականի համաձայն;

- Չնայած Խորագիր 30-ին կամ Գլենդելի քաղաքային օրենսգրքի ցանկացած այլ դրույթին՝ սույն հանրային հրամանի գործողության և արտակարգ դրության ընթացքում թույլատրվում է մարզասրահների և ֆիզիկական ակտիվության բացօթյա գործունեությունը: Նման նպատակների համար օգտագործվող բացօթյա վայրը կարող է լինել միայն մասնավոր սեփականության տարածքում;

- Մարզասրահների օպերատորները պետք է պահպանեն իրենց կայանատեղիի առնվազն 50%-ը՝ իրենց գործողությունները բացօթյա տարածք տեղափոխելիս: Այն բիզնեսները, որոնք համօգտագործում են կայանատեղիները, և չեն կարող պահպանել նվազագույն 50% պահանջը, իրավունք ունեն օգտվել նվազեցված կայանատեղի պայմանից՝ այդ կայանատեղին համօգտագործող հարևանների միջնորդագրի հաջող ընթացակարգի միջոցով:

- Համայնքային ծառայությունների և զբոսայգիների տնօրենը, իր հայեցողությամբ, կարող է սահմանել քաղաքային այն այգիները, որտեղ կարող են տրվել բացօթյա մարզասրահների և ֆիզիկական ակտիվության գործունեության համար օգտագործման թույլտվություններ՝ որոշակի անհրաժեշտ պահանջներով, ներառյալ՝ վճարների կատարումը և ապահովագրության ապացույց ունենալը:

Բաժին 2. Սույն Հրամանը չպետք է մեկնաբանվի այնպիսի եղանակով, որը թույլ կտա որևէ բիզնեսի կամ անհատի գործել այնպիսի եղանակով, որը խախտում է Կալիֆորնիա նահանգի, Լոս Անջելեսի վարչաշրջանի հանրային առողջության գործակալի և Գլենդել քաղաքի որևէ առողջապահական հրաման կամ արձանագրություն, ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ հավաքույթների, ներսում ճաշելու, սոցիալական հեռավորության և դիմակների պահանջները:

Բաժին 3. Սույն հանրային հրամանի խախտումը կարող է հանգեցնել զբաղեցման ժամանակավոր վկայականի չեղյալ հայտարարմանը: Վարչաշրջանի հրամանի ցանկացած խախտում կդիտարկվի որեպս հասարակական կարգի խախտում և դրանով իսկ՝ Գլենդելի քաղաքային օրենսգրքի խախտում: Սույն հանրային հրամանի ցանկացած խախման դեպքում կարելի է դիմել քաղաքային դատախազի գրասենյակ՝ հետաքննության համար՝ Գլենդելի Քաղաքային օրենսգրքի 1.20 գլխով սահմանված կարգով, որը նախատեսում է տուգանքներ՝ ոչ ավել, քան $1,000-ի չափով, կամ ազատազրկում՝ ոչ ավել, քան վեց ամիս ժամանակով: Յուրաքանչյուր իրավապահ աշխատակից պետք է օգտագործի իր հայեցողությունը՝ այս հրամանի կիրառման շրջանակներում խախտումների համար, և մշտապես մտապահի հրամանի նպատակը: Խախտումները կարող են իրավական լուծում ստանալ նաև Գլենդելի քաղաքային օրենսգրքի 1.24-րդ գլխի դրույթներով, որոնք նախատեսում են տուգանքներ՝ այնտեղ ամրագրված այլ իրավապահական մեխանիզմների հետ մեկտեղ՝ առաջին դատակոչի համար՝ $400 տուգանք, երկրորդ դատակոչի համար՝ $1,000 և երրորդի համար՝ $2,000:

Ամսաթիվ՝ 31 հուլիսի, 2020թ.
Ժամը՝ 15:00

Ում կողմից՝ Ռուբիկ Գոլանյան
/Արտակարգ իրավիճակների ծառայության պաշտոնակատար/

By: _____
Roubik Golanian
Acting Director c

Ընդունված է որպես ձև՝

ՄԻՇԵԼ Ջ. ԳԱՐՍԻԱ /Քաղաքային դատախազ/